



# Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



## ԽՄԲԱՊԵՏՆԵՐՈՒ ՎԵՐԱՈՐԱԿԱՒՈՐՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

### ▪ ՆԱԽԱԲԱՆ

Խմբապետներու վերաորակաւորման դասընթացքը կը միտի գործօն խմբապետներու գիտելիքներու պաշարը զարգացնել ազգային, միութենական եւ սկաուտական մարզերու մէջ, որպէսզի իրենց ուսմունքներով յաւելեալ փորձառութիւն ձեռք ձգեն, ընդարձակեն իրենց գործունէութեան հորիզոնը, դառնան աւելի ինքնավստահ եւ լաւագոյն ձեռով վարեն իրենց վստահուած պաշտօնները:

Նկատի ունենալով որ դասընթացքին մասնակցողները իրենց պատասխանատուութեամբ կը գործեն սկաուտական տարբեր բաժանմունքներու մէջ եւ անոնց փոխանցուելիք կարգ մը մասնագիտական նիւթերը կը տարբերին իրարմէ, այս կ'ենթադրէ յատուկ ուսումնասիրութիւն, հետեւաբար, անոնք ըստ իրենց բաժանմունքին կը մէկտեղուին անջատ խումբերու մէջ, հետեւեալ դրութեամբ.-

*Ա. խումբ՝ Գալլիկ-Արծուիկ պատրաստականարուներ*

*Բ. խումբ՝ Արի-Արեւոյշ պատրաստականարուներ*

*Գ. խումբ՝ Երէջ-Պարմանուհի պատրաստականարուներ*

Իսկ միաւորի եւ մասնաճիւղի խմբապետ/ուիիները միասնաբար կը կազմեն Դ. խումբ մը, ուր անոնք իրենց կարգին, իրենց պաշտօններուն համաձայն, կը ստանան յաւելեալ գիտելիքներ: Անոնց կը վստահուի նաեւ Ա., Բ. եւ Գ. խումբերու մասնակիցներուն գիտելիքներ փոխանցելու պարտականութիւնը:

### ▪ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՒ ՑԱՆԿ

*(Ա., Բ., Գ. խումբերու համար)*

- 1) Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութեան ընդհանուր ուղեգիծը:

- 2) Ազգային դաստիարակութեան անհրաժեշտութիւնը պատանիներու համար:
- 3) Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական վարչական բաժանումները եւ խմբապետին դերը այդ մարմիններուն հետ:
- 4) Խմբապետին, փոխ-խմբապետին եւ վարիչ առաջնորդին դերը հետեւեալ ժողովներուն մէջ.-
  - ա) *Աստիճանաւորական*
  - բ) *Միաւորի խմբապետական*
  - գ) *Մասնաճիւղի խմբապետական*
  - դ) *Մասնաճիւղերու խմբապետական ընդհանուր ժողով*
- 5) Սկաուտական խմբաւորումներու (*ըստ բաժանմունքներու*) կազմակերպչական կառոյցը.-
  - ա) *Խմբակային գործունէութեանց մարզերը՝ անոնց կարեւորութիւնը եւ գործադրութեան եղանակը:*
  - բ) *Խմբային գործունէութեանց մարզերը՝ անոնց կարեւորութիւնը եւ գործադրութեան եղանակը:*
- 6) Խումբի խմբապետութեան աշխատելակերպը:
- 7) Սկաուտական գործելակերպի 4 հիմնական սիւները
  - ա) *Խոստում եւ դասնանք*
  - բ) *Խմբակային դրութիւն*
  - գ) *Սկաուտական կարգեր եւ մասնագիտական պէճեր*
  - դ) *Բնութեան մէջ բացօդեայ խաղեր*
- 8) Սկաուտական գործունէութեան իրաւաստութիւնը եւ խմբապետին դաստիարակչական դերը:
- 9) Գաստիարակութեան մարզեր եւ միջոցներ:
- 10) Սկաուտական արարողութիւններու հասկացողութիւնը եւ անոնց գործադրութեան եղանակը:
- 11) Ծրագրումի եղանակը եւ կազմակերպչական աշխատանքի հասկացողութիւնը:
- 12) Սկաուտական յայտագիրներու հիմքը եւ անոնց գործադրութեան եղանակը:
- 13) Գործունէութեան մը թղթածրարի պատրաստութեան եղանակը եւ նպատակը:
- 14) Զննարկումի եւ արժեւորումի առաւելութիւնները:
- 15) Լաւ խումբ մը ունենալու տուեալները:
- 16) Խմբապետին փոխ-յարաբերութիւնը՝ գերադաս եւ ստորադաս աստիճանաւորներու հետ, խումբի անդամներուն եւ ծնողներու հետ:

**Ծանոթ.-**

ա) Ըստ բաժանմունքի հասկացողութեան վերեւ յիշուած նիւթերը հարկ է յարմարցնել գայլիկական եւ երեցական բաժանմունքներու բառամթերքին:

բ) Թիւ 7 նիւթը՝ ըստ ճիւղերու.-

○ *Գայլիկական գործելակերպի 4 հիմնական սիւները.-*

*ա) Խոսարում եւ վոհմակիւն օրէնքը*

*բ) Մոկլիի պարմութիւնը եւ գայլիկական թոթամը*

*գ) Գայլիկական կարգերը եւ մասնագիտական պէճերը*

*դ) Բնութեան մէջ բացօդեայ խաղեր*

○ *Երեցական գործելակերպի 4 հիմնական սիւները.-*

*ա) Երդումը եւ նշանաբանը*

*բ) Տասնեակային դրութիւն*

*գ) Երեցական կարգերը եւ մասնագիտական պէճերը*

*դ) Բնութեան մէջ գործունէութիւններ*

(Դ. խումբին համար)

**Ա. բաժին**

1) Ի՞նչ է միաւորական դրութիւնը:

2) Ո՞վ է միաւորի խմբապետը:

3) Միաւորի խմբապետին պարտականութիւնները, պարտաւորութիւններն ու իրաւասութիւնները:

4) Միաւորի խմբապետին վոխ-յարաբերութիւնը՝ մասնաճիւղի խորհուրդին, վարչութեան, գերադաս եւ ստորադաս աստիճանաւորներու հետ:

**Բ. բաժին**

1) Ի՞նչ է մասնաճիւղային դրութիւնը:

2) Ո՞վ է մասնաճիւղի խմբապետը:

3) Մասնաճիւղի խմբապետին պարտականութիւնները, պարտաւորութիւնները եւ իրաւասութիւնները:

4) Մասնաճիւղի խմբապետին յարաբերութիւնը՝ մասնաճիւղի խորհուրդին, վարչութեան, գերադաս եւ ստորադաս աստիճանաւորներու հետ:

5) Հ.Մ.Ը.Մ.ի վարչական կառոյցը (Ա. եւ Բ. բաժիններուն համար):